



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

2881

529

5-26

2010



529
S-26

24

ՏԱՐԵՐՔ

S-26

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ



Ի պրոպ. Տ. Այվազյանի

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲԵՆՆԱԶԱՐ

1857

505

9237



15410

2002

39

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պատմութիւնը տղայոց դաստիարակութեան մէջ կարևոր բաներէն մէկն համարուած է . բայց թէ՛ բարոյական և թէ կենցաղագիտական փիլիսոփայութեանց մէջ պատմութեան օգուտը քաղելու համար՝ ժամանակագրութիւնը շատ հարկաւոր է : Վասն զի մինչև որ աշխարհքիս մեծամեծ դէպքերը իրենց բնական կարգաւոր չմտածոյին, պատմութիւնը ինչ օգուտ որ պիտի ընէր անցած բաներէն խելք տարկեցրնելով . նոր դիպումներու վրայ դաստատան ընելու համար, չկրնար ընել :

Իսկ ժամանակագրութիւնը երկու կերպով կը մտածուի . մէկ մը ժամանակին բաժանմանը կամ չափին նայելով . երկրորդ աշխարհքիս մէջ հանդիպած դիպումստոց կարգը մտածելով : Բայց մինչև որ առջինին վրայ հարկա-

առ անդիկոնքիւնները մարդ չունենայ, անկա-
րելի է որ երկրորդը շիտակ կամ գոնէ կարգա-
ւորեայ ըլլայ :

Մեր այս համառօտ գրոշածքը այնչափ կա-
րևոր անդիկոնքիւնները կոչ տայ՝ որ դեռահա-
սակ ոչսանողը իմանայ թէ հիւն ոչ նոր ազգեր
ժամանակիւ վրայ ինչ կերպ կերպ մտածոչ-
քիւններ ունեցեր են, ոչ ինչպիսի բաժանմունք-
ներ ոչ չափեր հեարեր են. որպէս զի հիւն ոչ
նոր, ազգայիւն ոչ օտար մատենագիրներոչ
պատմոնքիւնները կարդաչոչ արեւն այլևայլ
հայիւներ որ հանդիպիւն, իրարոչ հետ չշիտ-
թէ, ոչ աշխարհիւն դիպոշածները իստեւա-
փերոր բան մը չընէ :

Յոշուանք որ այս համառօտ անդիկոնքիւնե-
րը օգտակար ըլլան ոչսանողաց, ոչ ձանբայ
բանան աշիւ ընդարձակագոչն աշխատասի-
րոչքեանց :

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Վ Ր Ա Յ

1. Ժամանակագրութիւնը ընդհանրապէս կը նշանակէ ժամանակի վրայ տեղեկութիւնը:

2. Ժամանակագրութեան բառը երկու այլևայլ առմունք ունի: Մէկ մը կը նշանակէ որոշել այն թուականները որոնք որ այլևայլ դարուց պատմութեանը կը պատշաճին: Եւ այս արտեստական ժամանակագրութիւն կըսուի:

3. Մէկ մ' ալ կը նշանակէ այն այլևայլ որոշուած թուականներուն պատմութեան կարգը, զլիսաւոր դիպուածները ըստ իւրաքանչիւր թուականին համառօտելով: Եւ այս է պատմական ժամանակագրութիւնը:

4. Մենք այս համառօտ ժամանակագրութեանս մէջ առջի նշանակութեամբը առ-

նելով կըսենք թէ ժամանակագրութիւնը ժամանակը չափելու արուեստ կըսուի : Ասան զի ժամանակին այլևայլ բաժանմանը վրայ կը խօսի . ու կը սորվեցընէ թէ ժամանակին չափմունքը ինչպէս յարմարցընելու է անցած դացած գործողութեանցը ու դիպուածներուն , որ պատմութիւնը լաւ կարգի դրուի , ու որոշ հասկըցուի :

5 . Այս պատճառիս համար ժամանակագրութեան ուսմամբը պէտք է սորվինք թէ այլևայլ ազգեր ժամանակը ինչպէս կը բաժնէին :

6 . Ժամանակագրութիւնը ու աշխարհագրութիւնը պատմութեան երկու աչքը կը սեպուին : Ասան զի ժամանակագրութիւնը բնական կարգի մէջ կը դնէ թագաւորութեանց սկիզբն ու վերջը , երևելի մարդիկներու ծնունդն ու մահը , ու տէրութեանց ու ազգաց գլխաւոր փոփոխութիւնները ու դիպուածները : Իսկ աշխարհագրութիւնը կիմացընէ թէ այս ամէն դիպուած՝ աշխարհքիս որ կողմը հանդիպեր է :

Ժամանակը ոչ իրեն մատուցիր .

7 . Ժամանակին սկիզբը աշխարհքիս ստեղծմանէն կը սկսի : Իսկ ժամանակն է փոփոխութիւն շարժման ու դիպուածներու : Ասան զի մարդիկ ժամանակը կը չափեն հետ զհետէ իրենց վրայ եղած տպաւորու-

թեանց փոփոխութենէն : Եւ որովհետեւ մարդս քանի որ մեծնայ քիչ բան իրեն տը պաւորութիւն կ'ընէ , վասն զի քիչ փոփոխութիւն կիմանայ , անոր համար տարիքը առածներուն կարճ կերևնայ ժամանակը :

8 . Ժամանակը սովորաբար երկու կերպով կը բաժնուի . Բնական ու Արուեստական :

9 . Ժամանակին բնական բաժանմունքներն են Տարի , Սմիս , Օր . որ երկնային մարմնոց երևոյթներովը կը չափուին :

10 . Իսկ արուեստական բաժանմունքներն են Ժամ , վայրկեան , Շրջան , Պարբերոյթիւն , Թոշական , Դար , Հեզկանկ :

Տարի .

11 . Ժամանակին աւելի կատարեալ պըտոյտը տարին է . որ մէկ պտոյտով մը ամէն եղանակները կը դառնան կը պտըտին կը լմննան ու նորէն կը սկսին :

12 . Տարի որ կըսենք կիմանանք այն ժամանակը , յորում երկիրս արեուն չորս բոլորը պտոյտ մը կընէ . ու որ կետէն որ իր շարժմունքը սկսեր ենք զիտել , նորէն նոյն կէտը կը հասնի :

13 . Տարին Ատոկոսթալիական ու Քաղաքական կը բաժնուի : Ատոկոսթալիական տարին ալ կը բաժնուի Բնական , Ատոկոսթական , ու Լոշակական :

14 . Բնական տարի կըսուի այն ժամա-

նակը որ երկիրը արևուն չորս բոլորը պըտոյտ մը ընելու ատենը կը քչէ . որ մեր հաշուին նայելով 365 օր , 5 ժամ , ու 49' վայրկեան կը տևէ :

15 . Աստեղական տարի կըսուի այն ժամանակը , որ երկրիս ըրած պտոյտը՝ հաստատուն աստղի մը նայելով կը չափուի . որ կը տևէ 365 օր , 6 ժամ , ու 10' վայրկեան :

16 . Լուսնական տարի կըսուի այն ժամանակը , յորում լուսինը երկրիս բոլորը 12 անգամ պտոյտ կընէ . որ կը տևէ 354 օր , 8 ժամ , 48' վայրկեան , ու 39" երկվայրկեան :

17 . Բնական , աստեղական ու լուսնական տարիները անոր համար աստղաբաշխական կըսուին , վասն զի աստղաբաշխական դիտողութեամբ դոնուած են :

18 . Իսկ քաղաքական տարի կըսուի այն որ սովորաբար ամէն ազգ ու ամէն տէրութիւն կը գործածեն . որուն հաշիւը ամբողջ օրերով կըլլայ , չէ թէ ժամերով ու վայրկեաններով :

19 . Այս քաղաքական տարին երկու կերպ է Հասարակ ու Նահանջ :

20 . Հասարակ տարին 365 օր է : Իսկ Նահանջ տարին , որ չորս տարին հեղ մը կըլլայ , 366 օր է :

21 . Այս մէկ օրը ամէն չորս տարին հեղ մը եւելցընելու պատճառն այս է , որ քաղաքական տարին բնական տարւոյն հետ հաւասարի : Վասն զի բնական տարին զրե-

Թէ 6 ժամի չափ քաղաքական տարիէն երկայն ըլլալով, այս 6 ժամը չորրորդ տարին 24 ժամ կընէ, որ օր մըն է: Նահանջ տարւոյն աւելի օրը փետրուար ամսոյն վրայ կեւելցուի. անոր համար հասարակ տարին որ փետրուարի ամիսը 28 օր է, նահանջ տարին 29 օր կըլլայ:

22. Իսկ որ տարին նահանջ ըլլալը զըտնալու կերպն այս է: Ինչ տարի որ կուզես կի վրայ բաժնէ. Թէ որ մնացորդ չաւելնայ, տարին նահանջ է. իսկ Թէ որ 1 կամ 2 կամ 3 աւելնայ, ըսել է Թէ նահանջ տարիէն ետև 1 կամ 2 կամ 3 տարի անցեր է:

$$4/ 183,9, /459$$

$$\underline{16}$$

$$"23$$

$$20$$

$$\underline{\quad}$$

$$"39$$

$$36$$

$$\underline{\quad}$$

$$3$$

$$4/ 184,0, /460$$

$$\underline{16}$$

$$"24$$

$$24$$

$$\underline{\quad}$$

$$000$$

Յայտնի կերևնայ որ 1839 տարին նահանջէն ետև 3դ տարին է. իսկ 1840ը նահանջ տարի է:

23. Բայց այս կանոնը դարազրուխներու նայելով ճիշտ չէ. վասն զի ամէն դարազրուխի մնացորդ չաւելնար. անոր համար ամէն դարազրուխ նահանջ չըլլար, հասարչորս դարազրուխ հեղ մը նահանջ կըլլայ:

Այլևայլ քաղաքական տարիներ .

24 . Ամէն ազգ տարին մէկ կերպով չէին չափեր , անոր համար այլևայլ ազգաց մէջ այլևայլ քաղաքական տարիներ եղած են ու կան :

25 . Հին հռովմայեցւոց տարին , որ Հռոմուլոս¹ էր դրեր , տասը ամիս էր . որ են

1 Մարտ .	31 օր
2 Ապրիլ .	30 օր
3 Մայիս .	31 օր
4 Յունիս .	30 օր
5 Կուինտիլիս .	31 օր
6 Սեքստիլիս .	30 օր
7 Սեպտեմբեր .	30 օր
8 Յոկտեմբեր	31 օր
9 Նոյեմբեր .	30 օր
10 Դեկտեմբեր .	30 օր

որ բոլորը մէկէն կընէ 304 օր :

Այս կերպով էր ուրիշ Իտալիոյ հին ազգաց ալ տարւոյն հաշիւը :

1 Հռովմայեցւոց առասպելաբանութիւնը կըսէ թէ Հռոմուլոս Արեսի ու Ռէա վեստեան քրքմուհւոյն զաւակն էր իր հռեմոս երկուորեակ եղբօրը հետ . երկուքն ալ Տիբեր գետին եզերքները նետեցին , որուն ջուրը պակսելով խղճուէլէն ազատեցան ու մատակ գայլ մը զիրենք սնուց ,

26. Ետքը Նումա Պոմպիլիոս¹ տարին
տասուերկու ամիս ըրաւ .

1	Յունուար .	29 օր
2	Փետրուար .	28 օր
3	Մարտ .	31 օր
4	Ապրիլ .	29 օր
5	Մայիս .	31 օր
6	Յունիս .	29 օր
7	Կուինտիլիս .	31 օր
8	Սեքստիլիս .	29 օր
9	Սեպտեմբեր .	31 օր
10	Տօկտեմբեր .	29 օր
11	Նոյեմբեր .	29 օր
12	Դեկտեմբեր .	29 օր

որ բոլորը մէկէն կընէ 355 օր

27. Կուինտիլիս ու Սեքստիլիս ամիսներուն անունը ետքը փոխուեցաւ , ու Յուլիս և Օգոստոս դրուեցաւ Յուլիոս Կեսարին ու

մինչև որ Փաւստուլոս Հովիւը զանոնք գտաւ ու իրեն որդեգիր ըրաւ : Հռոմուլոս Քրիստոսէ 753 տարի առաջ Հռոմ քաղաքը հիմնեց . ու մեռնելէն ետքը դից կարգն անցաւ :

1 Քրիստոսէ 714 տարի առաջ Հռոմուլոսէ ետև Հռովմայ Թագաւոր նստաւ . առանձնութիւն սիրող մարդ ըլլալով ըսին թէ Եգերիա նիմփայէն ազգեցուածիւններ կառնէր . Հռովմայեցւոց կրօնական ու քաղաքական օրէնքներ դրաւ ու շատ բարեկարգութիւններ խոթեց :

իր յաջորդին Օգոստոս կայսեր¹ յիշատակին համար :

28. Յուլեան ըսուած տարին ալ տասուերկու ամիս էր .

1 Յունուար .	31 օր
2 Փետրուար .	28 օր
3 Մարտ .	31 օր
4 Ապրիլ .	30 օր
5 Մայիս .	31 օր
6 Յունիս .	30 օր
7 Յուլիս .	31 օր
8 Օգոստոս .	31 օր
9 Սեպտեմբեր .	30 օր
10 Հոկտեմբեր .	31 օր
11 Նոյեմբեր .	30 օր
12 Դեկտեմբեր .	31 օր

որ կընէ տարին 365 օր

Յուլեան հաշուովը չորս տարին հեղ մը տարին 366 օր կըլլայ , այն տարին փետ-

1 Յուլիոս Վեսար Գրիստոսէ 100 տարի առաջ ծնաւ , հռոմայեցւոց երևելի զօրավար էր . հին քաղղիացւոց դէմ՝ ըրած պատերազմները շատ երևելի են : Հռոմայեցւոց հասարակապետութիւնը ինքնակալութիւն դարձընել ուղեղուն՝ զինքը սպաննեցին : Օգոստոս կայսրը Վեսարու որդեգիր և իրեն յաջորդ եղաւ ինքնակալութեան . աշխարհքիսխաղաղութիւն տուաւ և իր ատեն Գրիստոս աշխարհք եկաւ :

րուար ամիսը 29 օր ըլլալով. ինչպէս որ վերը ըսինք (20, 21) ¹:

29. Այս նորոգութիւնս Յուլիոս Կեսար ըրաւ Քրիստոսէ 46 տարի առաջ: Այս բանիս համար Եգիպտոսէն կանչեց Սոսիգենէս ² անուանի ուսումնականը. և որովհետև այն տարւոյն գլուխը բուն ճշմարիտ գլխէն 67 օր հեռացեր էր, անոր համար այն տարի 15 ամիս ըրին տարին, որ եղաւ 445 օր. ու այն պատճառաւը Շփոթութեան տարի ըսուեցաւ:

30. Գրիգորեան ³ տարւոյն ամիսներուն

1 Հռովմայեցիք մարտի Կաղանդաց 6ը նահանջ տարին երկրորդ անգամ կընէին, ու կըսէին bis sextus, ասկից ելած է որ Bissextilis կըսեն նահանջ տարւոյն:

2 Աղէքսանդրացի աստեղաբաշխ էր. որ հաւանեցուց՝ թէ արեգակնային տարի պէտք է գործածել: Թէպէտ իր տոմարին պակասութիւնը ինքն աւիմացաւ, բայց թողուց որ ետքի եկողները շտկեն:

3 Գրիգոր ԺԳ Հռովմայ քահանայապետ 1582ին Յուլեան տոմարին սխալը շտկելուն համար Գրիգորեան նորոգութիւն կըսուի նոր տոմարը: Իսկ Յուլեան տոմարին սխալն այս էր որ տարին 365 օր 6 ժամ կը սեպէր նէ, 11 վայրկեան աւելի էր այս հաշիւը ճշմարիտ հաշուէն, որ 131 տարուան մէջ օր մը կընէ: Անոր համար 1582ին Յուլիոս անուամբ վերոնացի մը ցուցուց որ գարնանային հասարակածը բուն ճշմարիտ հասարակածէն 10 օր առաջ ինկեր էր, ու Մարտի 21ին ըլլալու տեղ 11ին էր այն տարի: Ուստի Գրիգոր պապը հոկտեմբեր ամսէն տասը օր թողլով, Յուլեան տոմարը շտկեց:

ու օրերուն թիւը Յուլեան տարւոյն հաւա-
սար է : Միայն Գրիգորեան տարւոյն ամիս-
ները Յուլեան տարւոյն ամիսներէն 12 օր
առաջ կը սկսին :

31 . Անկից զատ Յուլեան հաշուովն որ
ամէն դարազրուխ նահանջ պիտի ըլլայ ,
Գրիգորեան հաշուով իրեք դարազրուխ նա-
հանջ չըլլար , ու չորրորդին միայն կըլլայ :

32 . Ռուսաստանէն զատ բոլոր Եւրո-
պայի ազգերը այս Գրիգորեան տոմարը կը
գործածեն :

33 . Հրէայք լուսնական տարի կը գոր-
ծածէին , ու երկու տարի ունէին Սրբազան
ու Քաղաքական . երկուքն ալ տասուերկու
ամիս էր : Սրբազանը զարնանային հասա-
րակածին կը սկսի . քաղաքականը աշնա-
նային :

34 . Ասոնցմէ զատ ուրիշ երկու տարի
ալ ունէին . Շաքարական , որ եօթը տարին
հեղ մըն էր , ու այն տարին երկիր չէին բա-
ներ . ու Յոբելեան տարի ամէն 49դ տարին .
որ երկիր չբանելէն զատ , գերիններուն ալ
ազատութեան տարի էր . ու ով որ ազբա-
տութեան պատճառաւ իր ժառանգութիւնը
ձեռքէ հաներ էր , նորէն ետ կառնէր այս
Յոբելեան տարին :

35 . Ամիսներուն անունները ասոնք են .

1 Նիսան .	30 օր
2 Եսա .	29 օր
3 Սիվան .	30 օր

4	Թամուղ .	29 օր
5	Աբ .	30 օր
6	Իլոււլ .	29 օր
7	Թշրի .	30 օր
8	Խեսոււան .	29 օր
9	Քասղև .	30 օր
10	Թէբէտ .	29 օր
11	Սեբաթ .	30 օր
12	Ագար .	29 օր

Ասիկայ սրբազան տարւոյն կարգն է . իսկ քաղաքական տարին Թշրի ամսէն կը սկսի:

36 . Հրէից տարին լուսնական տարի ըլլալով, որպէս զի արևուն տարւոյն հետ միանայ, երբեմն Ագար ամսէն ետքը Վէպար անունով ամիս մ'ալ կեւելցընեն 29 օր:

37 . Երբեմն ալ Խեսոււան ամիսը օր մը կեւելնայ, կըլլայ 30 օր, ու այն տարին Լիառոր կըսուի: Տարի ալ կըլլայ որ Քասղև ամիսը օր մը կը պակսի, ու կըլլայ 29 օր . ու այն տարին Թերատ կըսուի:

Բոլոր այս հաշիւները կընեն տարինին անխախտ ալահելու համար:

38 . Եգիպտացւոց սովորական տարին արեգակնային էր, ու 12 ամիս . ամէն մէկ ամիսը 30 օր, ու 5 օր ալ Աւելեաց: Ասանկով տարին 365 օր կըլլար . ու չորս տարին հեղ մը նահանջ չընելով, շարժական կըսուէր տարինին¹:

¹ Եղաւ ատեն որ Եգիպտացիք մէկ լուսնական ամիսը տարի մը անուանեցին . ետքը իրեք, ետքը

39 . Եզրիպտացւոց քուրմերը զհատէին որ նահանջ չընելով միշտ հետ զհետէ իրենց տարին ետև կը մնար , բայց չէին ուզեր շտկել , որպէս զի ասանկ շարժական ըլլալով տարին , տօներն ալ շարժական ըլլան , ու անանկով տարւոյն բոլոր օրերն ալ նըւիրական ըլլան :

40 . Եզրիպտացւոց ամիսներուն անունը ասոնք են .

- 1 Տոթ .
- 2 Պաոփի .
- 3 Աթեր .
- 4 Խոյակ .
- 5 Տիբի .
- 6 Մեխիր .
- 7 Փարմենոթ .
- 8 Փարմոնթի .
- 9 Պախոն .
- 10 Պայեսնի .
- 11 Եպիփի .
- 12 Մեզորի , ու

Աւելեաց կամ Վերագիր :

41 . Աթենացիք ալ առջի բերանը լուսնական տարւով կերթային , տասուերկու ամիս բաժնելով , որ տարին 354 օր կըլլար :

չորս , ետքը վեց ամիսը տարի մը համարեցին : Եզրիպտոսի գաւառներուն մէջ տարւոյ զանազան ունթիւն կար , ոմանք լուսնական տարի կը գործածէին , ոմանք ալ արեգակնային :

Բայց տարւոյն եղանակներուն փոփոխութենէն իմանալով որ ծուռ է այս հաշիւը , հաստատեցին՝ որ ամէն տասնըինը տարին հեղ մը տարին 13 ամիս ընեն :

42 . Ասանկով ամէն Ողոմպիադին առջի տարւոյն , առջի ամսուն առջի օրը ամառնային արեազարձէն ետքի նոր լուսնին կը հանդիպէր :

43 . Աթենացւոց ամիսներուն անունները ասոնք են .

1	Հեքագոմաէոն .	30 օր
2	Մէգալիդնիոն .	29 օր
3	Վոէտրոմիոն .	30 օր
4	Բիանէփսիոն .	29 օր
5	Մէնաքթերիոն .	30 օր
6	Փոսիտէոն .	29 օր
7	Ղամելիոն .	30 օր
8	Անթէսդէրիոն .	29 օր
9	Էլաֆէվոլիոն .	30 օր
10	Մունիխիոն .	29 օր
11	Թարղէլիոն .	30 օր
12	Աքիրոֆորիոն .	29 օր

1540
39

Իսկ նահանջ տարւոյն ամիսը՝ Երկրորդ Փոսիտէոն 30 օր :

44 . Կորնթացիք , Բէովտացիք , Լակեդեմոնացիք , Մակեդոնացիք , Բիւթանացիք ու Կիպրացիք ալ տարբեր հաշիւներ ու ամիսներու անուններ ունէին , բայց շատ անձանօթ են :



45. Հայերը հին ատենէն 'ի վեր արե-
զակնային տարի գործածեր են Եզիպտա-
յւոց նման. ու տարինին 12 ամիս ունի,
ամէն մէկ ամիսը 30 օր, ետքը 5 օր ալ Ա-
ւելեաց, որով տարին կըլլայ 365 օր:

46. Բայց ամենևին նահանջ չընելով
միշտ շարժական կըլլայ Հայոց տարին ալ.
ու այս շարժական տարին քաղաքական տա-
րի կըսուի:

47. Երկրորդ Մովսէս կաթողիկոսին ա-
տենը յամի տեառն 551 տեսնալով թէ շատ
չեղեր են ճշմարիտ հաշուէն, իրենց տոմա-
րը շտկեցին Էաս անունով իմաստուն Ա-
ղեքսանդրացիին հաշուին յարմար: Բայց
այն ատենն ալ նահանջ տարի չհաստա-
տելնուն, տարին միշտ շարժական մնաց:

48. Տոմարին այս նորոգութիւնը Հոցք
մեծ թուական մը սեպելով, ասկէց սկսաւ
Հայոց թուականին հաշիւը, որ հիմայ սո-
վորութիւն եղած է Քրիստոսի թուականին
հետ գործածել: Իսկ առջի ատենները ձե-
ռադրաց մէջ աւելի այս ազգային թուա-
կանը կը գործածէին:

49. Այս քաղաքական տարիէն զատ՝
Հայք եկեղեցական տարի մ'ալ ունին, որ
ըստ Յայսմաւուրաց կըսուի. և այս եկեղե-
ցական տարին ամէն չորս տարին հեղ մը
նահանջ ընելով, Աւելեաց վրայ օր մը կա-
ւելցընէ, որ կըլլայ 6 օր. ու ասանկով Յու-
լեան տարւոյն հետ յարմար կերթայ:

50. Հայոց ամիսներուն անունները ա-
սոնք են.

- 1 Նաւասարդ .
 - 2 Հոռի .
 - 3 Սահմի .
 - 4 Տրէ .
 - 5 Քաղոց .
 - 6 Արաց .
 - 7 Մեհեկան .
 - 8 Արեդ .
 - 9 Ահեկան .
 - 10 Մարերի .
 - 11 Մարգաց .
 - 12 Հրոտից .
- Աւելեաց :

Յ1 . Հայերու չարժական տարին անխախտ ընելու համար 1616ին ջուղայեցի վաճառական մը Աղարիա անուն նոր հաշիւ մը դրաւ . որ ամէն չորս տարին հեղ մը նահանջ կընէ :

Յ2 . Աղարիայի տարին դարնանային հասարակածին կը սկսի . 12 ամիս ունի , ամէն մէկ ամիսը 30 օր , 5 օր ալ Աւելեաց . բայց նահանջ տարին Նիրհան ամիսը 31 օր կըլլայ :

Յ3 . Աղարիայի ամսոց անուններն ասոնք են .

- 1 Համս .
- 2 Ադամ .
- 3 Շբաթ .
- 4 Նախայ .

- 5 Ղամար .
 - 6 Նադար .
 - 7 Թիրայ .
 - 8 Դամայ .
 - 9 Համիրայ .
 - 10 Արամ .
 - 11 Ովդան .
 - 12 Նիրհան .
- Աւելեաց :

54 . Այս հաշիւը գլխաւորաբար Հնդկաստանու Հայերը կը գործածեն :

55 . Արաբացւոց ու Հազարացւոց տարին լուսնական է . տասուերկու ամիս ունի . ամիսներուն մէկը 29 , մէկայլը 30 օր է . որով տարին կըլլայ 354 օր :

56 . Այս պատճառիս համար արևուն տարւոյն նայելով ամենեին հաստատութիւն չունի ոչ անոնց տարեգլուխը և ոչ ամսագլուխը : Ու արևու 33 տարւոյն մէջ տարի մը տարբերութիւն կընէ . անանկ որ մենք 33դ տարին որ ըսենք , անոնք 34դ տարին կըսեն :

57 . Իսկ ամսուն անունները ասոնք են .

- 1 Մուհարրէմ .
- 2 Սէֆէր .
- 3 Բէպիլ էվլէլ .
- 4 Բէպիլ ախըր .
- 5 Ճէմազիլ էվլէլ .
- 6 Ճէմազիլ ախըր .

- 7 Բէճէպ .
- 8 Շապան .
- 9 Բամազան .
- 10 Շէվկալ .
- 11 Զիլգատտէ .
- 12 Զիլհիճճէ .

58. Ինչպէս որ այլևայլ ազգաց տարւոյն հաշիւը տարբեր է, ասանկ ալ իրենց տարեզուիսը այլևայլ ատեն կիյնայ: — Քաղղէացւոց, Եզիպտացւոց, Պարսից, ու Հրէից քաղաքական տարին աշնանային զիչերահաւասարէն կը սկսէր: Հռովմայեցւոց, Սնգղիացւոց մինչև 1752 ու Հրէից սրբազան տարին, Սգարիայի տարին ալ գարնանային հասարակածէն: Իսկ Արաբացւոց ու Յունաց տարին ամառնային արևադարձէն:

Ամիս .

59. Տարւոյն առաջին ու զլիսաւոր բաժանմունքը ամիսն է . և սովորաբար ամէն ազգաց մէջ տասուերկու ամիսը տարի մըն է¹:

60. Ամիսը երկու կը բաժնուի Աստուղաբաշխական կամ Բնական, ու Քաղաքական:

1 Մէքսիկացիք ու Ճաւացիք ամիսը երբեմն 30 և երբեմն 20 օր սեպելով երկու կերպ տարի կունենային, մէկը տասուերկու ամսով, մէկալը տասնըու թը:

61. Ատեղաբաշխական կամ բնական ամիսն այն է, որ երկրիս կամ լուսնին շարժմունքովը կը չափուի :

62. Անոր համար Ատեղաբաշխական ամիսն ալ երկուք կը բաժնուի Լուսնական ու Արեգակնային :

63. Լուսնական կըսուի այն միջոցը՝ որ լուսնը երկրիս բոլորը պտոյտ մը կընէ :

64. Լուսնական ամիսն ալ երկուք կը բաժնուի Ատեղական ու Զուգընթացական :

65. Ատեղական կըսուի լուսնական ամիսը թէ որ լուսնին պտոյտը երկնքի կէտի մը նայելով չափուի, անանկ որ լուսնի ամբողջ շրջանը ինչ կէտէն որ սկսաւ՝ նորէն նոյն կէտը դառնայ : Այս շրջանը կը տեւէ 27 օր, 7 ժամ, 43' վայրկեան, 8" երկվայրկեան :

66. Զուգընթացական կըսուի լուսնական ամիսը թէ որ երկնքի կէտով մը չի չափուի լուսնին պտոյտը, հապա երկրիս նայելով, որ անանկով քիչ մը կերկըննայ : Վասն զի լուսնին քալելու ատենը երկիրն ալ կը քալէ . և մինչև որ լուսնին քալուածքը երկրիս քալուածքին հաւասարի, հարկաւորապէս միջոցը քիչ մը կերկըննայ, ու կը տեւէ 29 օր, 12 ժամ, 44' վայրկեան, ու 3" երկվայրկեան :

67. Արեգակնային ամիս կըսուի այն միջոցը որ երկիրը Զողիակոսին մէկ կենդանակերպէն մէկալ կենդանակերպը կը հասնի :

68. Եւ որովհետեւ երկիրը միշտ 365 օրուան, 5 ժամու, ու 49' վայրկեանի մէջ կընէ բոլոր տասուերկու կենդանակերպին պտոյտը, թէ որ 12ի վրայ բաժնելու ըլլանք, արեղակնային ամէն մէկ ամիսը կըլլայ 30 օր, 10 ժամ, 20' վայրկեան, 5" երկվայրկեան :

69. Քաղաքական ամիսն այն է որ ամբողջ օրերով կը հաշուի, ու ժամի կամ վայրկեանի հաշիւ չըլլար, ինչպէս որ սովորաբար կը գործածուի :

Եօթնեակ, Օր.

70. Ամիսը չորս մաս կը բաժնուի, որ Եօթնեակ կըսուին. վասն զի ամէն մէկ մասը եօթը եօթը օր է.

71. Այս եօթնեակի բաժանմունքն այնչափ ընդհանուր է, որ կերևնայ թէ Աստուծոյ աշխարհաստեղծութեան օրերէն առնուած է, ու ազգաց բաժանմունքը շեղած հաստատուած է¹ :

72. Քրիստոնեայք եօթնեակը կիրակիէն կը սկսին, Հրէայք շաբաթէն, Մահմետա-

¹ Ճաւացւոց ու հին Մեքսիկացւոց մէջ երկու տեսակ շաբաթ կար մէկը 5 օրուան, մէկալը 7 օրուան. Մեքսիկացիք 13 օրուան շաբաթ մըն ալ ունէին : Գաղղիացւոց մեծ յեղափոխութեան ժամանակը շաբաթը 10 օր ըրին. բայց չտեսց :

կանք ուրբաթէն . կերևնայ որ հեթանոսք
ալ կիրակիէն կը սկսէին :

73 . Յուլեան տարւոյն մէջ 52 եօթնեակ
կայ ու օր մը , և թէ որ ամէն մէկ ամիս չորս
չորս եօթնեակ միայն հաշուելու ըլլանք , 13
ամիս ու օր մը կընէ յուլեան տարին :

74 . Եօթնեակը , շաբաթ ալ կըսուի , որ
եօթը օր է :

75 . Իսկ օրը երկու կերպով կը մտածուի
Ստոնդարաշխական ու Սրոնետական :

76 . Աստեղաբաշխական կըսուի օրը՝ թէ
որ ցորեկն ու գիշերը մէկտեղ առնուի ,
կամ այն ժամանակը՝ որ երկիրը իր ա-
ռանցքին վրայ պտոյտ մը կընէ , որ կէսօ-
րուընէ կէս օր հաշուելով 24 ժամ կընէ :

77 . Բնական ալ կըսուի այս օրը՝ որովհետև
այս հաշուով ամէն աշխարհագրական լայ-
նութեան տակ օրուան երկայնութիւնը միա-
կերպ անփոփոխ կըլլայ :

78 . Արուեստական օրը , որ ցորեկ ալ
կըսուի , կը սեպուի արևուն ծագելէն մինչև
մտնալը . և այս այլևայլ տեղ , ու տարւոյն
այլևայլ եղանակին կը փոխուի , կերկըն-
նայ , ու կը կարծընայ :

79 : Օրուան սկիզբը չորս կերպով մտա-
ծուած է : Մէկ մը՝ հին Բաբելոնացիք , Պար-
սիկք , Ասորիք , ու շատ արևելեան ազգեր ,
ինչպէս հիմակուան Յոյներն ալ , արևուն
ծագելէն կը սկսէին օրը :

80 . Երկրորդ՝ հին Աթենացիք , Հայերը ,
Հրէաները , Պոհեմիացիք , ու Սիլեզիացիք ,

Չիները, Տաճկըները, ու քանի մը իտալացոց դաւառներ, արեւուն մտնալէն կը սեպեն օրուան սկիզբը : Աստուած ալ Հրէից ասանկ հրամայած էր . « Յերեկոբեայ մինչև ցերեկոյն շաբաթացուսջիք զշաբաթս ձեր ¹ » . ասոր համար Հրէայք ուրբաթ իրիկուընէ կը սկսին շաբաթը, որ շաբաթ իրիկուն կը լմնայ : Այս սովորութիւնը եկեղեցական հանգէսներու մէջ ալ մինչև հիմակ պահուած է, ու մեծ տօներու առջի իրիկուընէ նախատօնակ կըլլայ :

81 . Երրորդ՝ Արաբացիք ու հիմակուան աստղաբաշխները ու հին Ռամբրացիք, որ կէս օրուընէ կը սկսին :

82 . Չորրորդ՝ Եգիպտացիք, ու հին Հոռմայեցիք, ու հիմակ Անգղիացիք, Գաղղիացիք, Հոլանտացիք, Սպանիացիք, ու Փորդուբէշները կէս գիշերէն կը սկսին :

83 . Եկեղեցական կանոնաց մէջն ալ օրը ասանկ կէս գիշերէն կը սկսի . անոր համար ծումապահութեան ու պահոց օրէնքն ալ կէս գիշերէն կը սկսի :

84 . Շաբթուան օրերուն անունները՝ Հրէայք օրերուն կարգաւր կը համբէին :

Միաշաբաթ .

Երկուշաբաթի .

Երէքշաբաթի .

Չորեքշաբաթի .

Հինգշաբաթի .

Պարասգևի .

Շաբաթ .

85 . Հայերն ալ այս անունները պահած են , միայն միաշաբաթին տեղ կիրակի կըսեն , որ Յունաց լեզուով տէրունական ըսել է . ու Պարասգևիին տեղ Ոչրբար կըսեն , Արաբացոց կամ Ասորոց լեզուէն առած , որ պատրաստութիւն ըսել է :

86 . Հին կռապաշտները շաբթուն օրերուն եօթը մոլորակներուն անունը դրեր էին , որ իրենց կուռքերուն անուններն են . վասն զի կըսէին թէ ամէն մէկ օրուան մէյ մէկ մոլորակ կամ մէյմէկ կուռք կը տիրէ : Հիմակ ալ իտալացիք ու Գաղղիացիք նոյն անունները կը գործածեն :

Կիրակի , Արևի օր կըսուէր .

Երկուշաբթի , Լուսնի օր .

Երեքշաբթի , Հրատի կամ Արեսի օր .

Չորեքշաբթի , Փայլածուի կամ Հերմեսի օր .

Հինգշաբթի , Լուսննթագի կամ Արամազդայ օր .

Ուրբաթ , Արուսեկի կամ Ափրոզիտեայ օր .

Շաբաթը նոյն է :

87 . Իսկ Եւրոպայի հիւսիսային ազգերն ալ իրենց հին հեթանոսութեան ատենի կուռքերուն անունը շաբթուն օրերուն դրած են :

88 . Պարսիկք բոլոր ամսուան օրերուն դատ դատ անուններ կու տային , ինչպէս

որ մեր մէջը շարժուն ամէն մէկ օրը զատ զատ անուն ունի :

89. Հոռուսայեցիք իրենց ամիսները կը բաժնէին Կաղանդք, Նոնայք և Իրոսք : Եւ որովհետեւ Յոյնք Կաղանդք չունէին, առած եղեր էր լատինացւոց մէջ Կաղանդք Յունաց ըսելը . որով կը հասկընային Ոչ երբեք :

Ժամ, վայրկեան .

90. Ժամը բնական օրուան քսանը չորրորդ մասն է . միջօրէական շրջանակին ամէն մէկ 15 աստիճանին ժամ մը կապելով : Արեւելեան ազգաց մէջ օրը 24 մաս բաժնելը շատ հին է ¹ :

91. Այլևայլ ազգք այլևայլ կերպով կը հաշուեն ժամերը : Բաքիդեան ժամք կը սուին թէ որ արևուն ծագելէն սկսուի 24 ժամը հաշուել :

92. Երոսպական ժամք կը սուին թէ որ կէս զիշերէն մինչև կէս օր 12 հաշուուի , ու կէս օրէն մինչև կէս զիշեր նորէն 12 :

93. Այս հաշիւը թէ որ կէս զիշերուան տեղ կէսօրուրնէ սկսուի Աստղաբաշխական կը սուի . ինչպէս որ առաջ ալ ըսինք (76, 81) :

94. Հրէայք արևուն մտնալէն ետև մին-

1 Ժամը մուրաւական անուն ալ առաւ , վասն զի աստեղահմայները ամէն մէկ ժամու նոր մուրաւակ մը տիրող կը դնէին :

չև ծագելը, ու ծագելէն մինչև մտնալը տա-
սուերկուքական հաւասար մաս կը բաժ-
նէին: Գիշերուանը չորս պահ կըսէին, ու
ամէն մէկ պահը իրեք իրեք մաս էր:

95. Հռովմայեցիք օրուան ժամերը եր-
կուք կը բաժնէին տուրնջևեալին ու գիշերալ-
ին: Ու ամէն մէկ եղանակի փոփոխական
կըլլար ժամերուն երկայնութիւնը:

96. Տուրնջևեալին ժամերը չորս ժամ
կը բաժնէին, ու կըսէին Առաջին ժամ 12.
1. 2. Երրորդ ժամ 3. 4. 5. Վեցերորդ ժամ
6. 7. 8. Իններորդ ժամ 9. 10. 11:

97. Իսկ գիշերային ժամերը չորս պահ
կը բաժնէին. Առաջին պահ 12. 1. 2. Եր-
րորդ պահ 3. 4. 5. Վեցերորդ պահ 6. 7. 8.
Իններորդ պահ 9. 10. 11:

98. Հայերը օրուան քսանը չորս ժամուն
զատ զատ անուններ կու տային:

99. Յորեկուան ժամերուն անուններն
ասոնք էին.

- 1 Այգ.
- 2 Ծայգ.
- 3 Զայրացեալ.
- 4 Ճառագայթեալ.
- 5 Հառաւիղեալ.
- 6 Երկրատես.
- 7 Հանթակող.
- 8 Հրակաթ.
- 9 Հուր փայլեալ.
- 10 Թողաթեալ.

11 Առաղօտ .

12 Արփող .

100 . Գիշերուան ժամերը կըսուէին

1 Խաւարակ .

2 Աղջամուղջ .

3 Մթացեալ .

4 Շաղաւօտ .

5 Կամաւօտ .

6 Բաւական .

7 Խօթափեալ .

8 Գիզակ .

9 Լուսաձեմ .

10 Առաւօտ .

11 Լուսափայլ .

12 Փայլածու .

101 . Մէկ ժամը 60' վայրկեան կամ Բուպե կը բաժնուի . մէկ վայրկեանը 60" Երկվայրկեան կամ Մանրերկրորդ :

102 . Հրէայք , Քաղղէացիք , Արաբացիք և ուրիշ արևելեան ժողովուրդներ մէկ ժամը 1080 գրասեց կը բաժնէին , և 18 զրախեցը մեր մէկ վայրկեանը կընէ :

103 . Հնդկաստանցիք օրը 60 կուրի կը բաժնեն . 1 կուրին 60 փուլ . 1 փուլը 60 փրան . ու 1 փրանը 10 դաս :

Շրջանք .

104 . Շրջանն է տարիներու , ամիսներու , ու օրերու միօրինակ պտոյտ , որ լմննալէն ետև նոյն պտոյտը նորէն նոյն կարգաւ կը սկսի :

105 . Եւ որովհետև արևուն և ուրիշ երկնային մարմնոց շարժմունքը ճիշտ չեն չափուիր , որ կոտորակ մը չմնայ՝ վայրկեան է եղեր կամ երկվայրկեան , անոր համար շրջանները հնարած են , որ այն մնացած կոտորակները ամբողջ թիւ մը ըլլան , այսինքն օր , ու տարի :

106 . Աւելի երևելի շրջանները այս իրերն են , Լուսնի շրջանը , Արևուշ շրջանը ու Ինդիկտիոնի շրջանը :

107 . Լուսնի կամ լուսնական ըսուած շրջանը 19 տարուան պտոյտ է , որ 19 տարի առաջ լուսնի լրմունքները Յուլեան տարւոյն որ ամսուան որ օրը հանդիպեր են նէ , տասնըինը տարիէն ետքը նոյն ամսուն նոյն օրը կիյնան : Այս շրջանը Մետոնեան ալ կըսուի , վասն զի Մետոն Աթենացին գտեր է 433 տարի Քրիստոսէ առաջ : Լուսնի ծնունդը գտնելու համար մինչև ութերորդ դար այս շրջանը կը գործածէին :

108 . Արևուն կամ Արեգակնային շրջանը 28 տարուան պտոյտ է : Քսանըութը տարիէն ետքը տոմարագիտութեան մէջ կի-

րակազիրները նորէն իրենց առջի կարգաւը կը պտըտին :

109. Այս շրջանը արևու շրջան կըսուի , չէ թէ արևուն ընթացիցը նայելով , հասարակիրակազիրներուն պատճառաւ . վասն զի կիրակին , ինչպէս որ առաջ ըսինք (86) , արևու օր կըսուէր :

110. Արևու շրջանին տարին գտնալու կանոնն այս է : Սեպէ որ այս շրջանը Քրիստոսի ծննդենէ 9 տարի առաջ գտնուած է , անոր համար որ տարիին շրջանն որ կուզես գտնալ՝ վրան 9 եւելցուր , ու 28ին վրայ բաժնէ . բաժինը քանիերորդ շրջանը ըլլալը կը ցուցնէ . իսկ մնացորդը՝ շրջանին քանիերորդ տարին ըլլալը :

111. Թէ որ ուզենանք գիտնալ թէ 1840ը արեգակնային շրջանին քանիերորդ տարին է , ասանկ պէտք է ընել :

$$28/ 1849, /66$$

$$\underline{168}$$

$$169$$

$$\underline{168}$$

$$001$$

Ասանկով կերևնայ որ արեգակնային շրջանին առջի տարին է , ու 67ր շրջանն է :

112. Ինդիկտիօնի շրջանը 15 տարուան շրջան է . որուն համար կ'ըսեն թէ մեծն կոստանդիանոս սահմանած ըլլայ , աստեղեայ խաչը տեսնելէն ետև : Եւ Ինդիկտիօնի առջի տարին կ'իյնայ յամի տեսուն 315 :

113. Այս շրջանը երկնային մարմիններու շարժմանը հետ բան չունի . բայց Հռոմայեցիք այս հաշիւը կը գործածէին քանի մը տուրքերու ժամանակը իմանալու համար, կամ ուրիշ քաղաքական բանի մը պատճառաւ : Մեծն կարողութեն ետքը Հռոմովմայ քահանայապետքը իրենց կոնզակներուն մէջ, որ Bulla կըսուին, այս ինդիկտիոնի տարին կը գործածեն :

Իննևտասներեակ կամ Ռսկերիա և Վերայիր :

114. Իննևտասներեակը կամ ոսկեթիւը տասներինը տարուան շրջան է, ու այն թիւն է որ լուսնի շրջանին քանիերորդ տարին ըլլալը կը ցուցընէ : Անոր համար ոսկեթիւը գտնել կամ լուսնի շրջանին տարին գտնել ըսելը մէկ բան է :

115. Իսկ լուսնի շրջանին տարին գտնելու կերպն այս է : Որ տարին որ կուզես զիտնալ թէ շրջանին քանիերորդ տարին է, վրան մէկ մը եւելցուր, ու 19ին վրայ բաժնէ . մնացորդը շրջանին քանիերորդ տարին ըլլալը կը ցուցընէ . իսկ թէ որ բան չաւելնայ, ըսել է թէ 19դ տարին է :

116. Թէ որ կուզես իմանալ թէ 1840ին ինչ է ոսկեթիւը . ասանկ ըրէ :

19/ 184.1, /96

171

131

114

17

Ըսել է որ 1840ը շրջանին 17դ տարին է :

117. Որովհետև Աթենացիք իննևտասներեակին շրջանին թիւերը ոսկի գրով հրապարակը կը կախէին, և արծաթ տախտակի մը վրայ ոսկի գրերով գրելով Հռոմ խաւրեցին, անոր համար Ոսկերիւ ըսուեցաւ : Հին տոմարագրութեանց մէջ ալ սովորութիւն եղեր էր ոսկի գրով գրել այս թիւերը, որովհետև շատ հարկաւոր թիւ է :

118. Վերադիր կըսուին այն օրերը, որ լուսնի տարուան վրայ կեւեցուին, որպէս զի արևուն տարուանը հաւասարի :

119. Արեգակնային տարին 365 օր ու 6 ժամ է . լուսնական տարին 354 օր ու 8 ժամ է . այս երկուքին իրարմէ տարբերութիւնը վերադիր կըսուի : Եւ որովհետև այս տարբերութիւնը 11 օրուրնէ շատ պակաս է, (վասն զի ճիշտ 10 օր, 21 ժամ, 1' վայրկեան ու 24" երկվայրկեան է), այս տասնըմէկ թիւը լուսնի շրջանին առջի տարուան վերադիրը կըսուի :

Տարիներու պարբերութիւն .

120 . Պարբերութիւնը տարիներու շարք մը կամ պտոյտ մըն է ժամանակը չափելու համար : Այս տեսակ տարիներու պարբերութիւններ շատ են . ու մեծ մասը գտնողին անունովը կը կոչուին :

121 . Մետոնեան պարբերութիւն , որ տասնուինը տարուան լուսնի շրջանն է . ու վերան նոր գուրցելիք մը չիկայ (107) :

122 . Կալիպեան պարբերութիւն , որ Կալիպպոս երեւիլի Կիւզիկեցի ուսումնականը գտեր է Քրիստոսէ 330 տարի առաջ . այս պարբերութիւնը 76 տարուան շրջանն է . ու Կալիպպոս կըսէր որ այս 76 տարին անցնելէն ետե՛լ լուսնի ծնունդները արևուն տարւոյն մի և նոյն օրերը կը հանդիպին ինչ օր որ 76 տարի առաջ հանդիպեր էին : Այս պարբերութիւնը Մետոնինը շտկելու համար գտնուեցաւ :

123 . Վիկտորեան պարբերութիւն 332 տարուան շրջանն է . ու այս պարբերութիւնը արևուն ու լուսնին շրջանները իրարու հետ բազմապատկելով ելած է : Այս պարբերութիւնը Վիկտորիոս անունով Քաղղիացի քահանայ մը գտաւ հինգերորդ դարուն մէջերը : Այս հաշիւը արևմտեան եկեղեցիք երկան ատեն գործածեցին զատկին օրը գտնալու համար , մինչև որ Գրիգորեան տոմարին նորոգութիւնը եղաւ :

124. Համբաւաւոր Յռչեան պարբերութիւնը 7980 տարուան շրջան է. արևու, լուսնի ու Ինդիկտիոնի շրջանները իրարու հետ բազմապատկելով ելած: Կըսուի որ այս պարբերութիւնը Յովսէփ Սքալիճէո Վերոնացի ազնուականը գտած ըլլայ. բայց Յուլեան կըսուի, վասն զի Յուլեան տարւոյն վրայ յարմարցուցած է:

125. Սքալիճէո այս պարբերութեան 47147 տարին կը դնէ Քրիստոսի տեառն մերոյ ծնունդը. որ անկէց առջի եղած դիպուածները՝ մարդ այս հաշուին կրնայ յարմարցընել:

Թուականներ.

126. Թուական կըսուի ժամանակի որոշ միջոց մը, որ գլխաւոր դիպուածով մը երևելի եղած է, ու անկէց իբրև արմատէ մը հետևեալ տարիները կը հաշուին:

127. Որովհետև մէկ թուական մը ուրիշ թուականէ մը լաւ սեպելու համար աստղաբաշխական հաշիւ չկայ, ուստի թուական հաստատելը կամաւոր բան է. անոր համար ատեն ատեն տեսակ տեսակ թուականներ հաստատուած են այլևայլ ազգաց մէջ:

128. Քրիստոսի թուականը բոլոր Եւրոպա, և ուրիշ տեղերու Քրիստոնէից մէջը հիմայ գրեթէ հասարակ է, որ Գեկտեմբերի 25ին կամ Յունուարի մէկին կը սկսի:

129. Այս թուականը վեցերորդ դարուն սկիզբները Փոքրըսուած Գիոնեսիոսը հաստատեց, որ Հռոմայեցի արքայ էր:

130. Արարչոչքեան կամ տոնղծման աշխարհի քոռականը Հրէից հաշուին նայելով Յուլեան պարբերութեան 953դ տարին կը հանդիպի, որ Քրիստոսէ 3761 տարի առաջ է: Անոր համար թէ որ Յուլեան պարբերութեան տարիէն 952 հանելու ըլլանք, մնացածը Հրէից հաշուին յարմար աշխարհքիս ստեղծմանը թուականն է:

131. Բայց եօթանասնից հաշուով մեր թարգմանութեանը հետեւելով Արարչութիւնն աշխարհի կիյնայ 5228 տարի Քրիստոսէ առաջ: Իսկ ժամանակագրաց մէջ սովորութիւն եղած է 4004 տարի գնել:

132. Ժամանակագրաց մէջ Աբրահամու կոչման քոռականը շատ երևելի թուական է. որ Քրիստոսէ 2015 տարի առաջ կիյնայ. Յուլեան պարբերութեան 2699դ տարին:

Աբրահամու կոչման թուականը կը սկսի Աբրահամու եօթանասունըհինգերորդ տարին, որ Աստուած իրեն երեցաւ ու խոստացաւ որ իր զաւկըները մեծ ազգ մը պիտի ըլլան:

133. Ողիմպիական քոռականը կամ Ողիմպիադը, զոր զլխաւորապէս Յոյնք կը գործածէին, հին պատմութեան մէջ շատ անուանի է:

Այս թուականիս սկիզբը ողիմպիական խաղերէն եղաւ, որ ամէն հինգերորդ տա-

բույն սկիզբը Պեղոպոնեսին մէջ Ողիմպիա քաղքին մօտ կըլլային: Անոր համար Ողիմպիազը չորս տարուան շրջան է. ու Յոյնք այս շրջանովը կը չափէին իրենց ժամանակը. ու խաղերը խաղցուած տարին Ողիմպիազին առջի տարին կըսուէր:

134. Առջի Ողիմպիազին սկսիլը Յուլեան պարբերութեան 39387 տարին կիյնայ, կամ Քրիստոսէ 776 տարի առաջ: Ուստի մինչև Քրիստոսի թուականը 194 Ողիմպիազ է:

135. Թէ որ մէկը ուզէ իմանալ թէ 1947 Ողիմպիազէն առաջ Ողիմպիազ մը Քրիստոսէ քանի տարի առաջ կիյնայ, պէտք է Ողիմպիազին թիւը 4ով բազմապատկել, ու 776էն հանել, ինչ թիւ որ մնայ, այնչափ Քրիստոսէ առաջ է այն ողիմպիազը:

136. Թէ որ մէկը ուզենայ իմանալ թէ 907 Ողիմպիազը Քրիստոսէ քանի տարի առաջ էր, վերի ըսած կանոնով ասանկ պէտք է ընէ:

90	776
4	360
<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
360	416

Ուրեմն 907 Ողիմպիազը կիյնայ Քրիստոսէ 416 տարի առաջ:

137. Իսկ թէ որ ուզենայ իմանալ թէ Քրիստոսի ո՞ր իցէ թուականը որ Ողիմպիազին կը պատասխանէ, պիտի Քրիստոսի թուականին վրայ 776 թիւը աւելցը-

նէ , ու ետքը Կի վրայ բաժնէ , ելած բաժինը կը ցուցընէ թէ քաներորդ Ողիմպիադին է : Ու թէ որ թիւ մ' ալ եւելնայ , այն ալ կը ցուցընէ թէ հետեւեալ Ողիմպիադին քաներորդ տարին է :

138 . Թէ որ ուղենանք իմանալ թէ 1845 որ Ողիմպիադին կը պատասխանէ , վերի ըսած կանոնով այսպէս պէտք է գտնենք :

	1845
	776
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	26.2.1.
4/655	24
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	22
	20
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	21
	20
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	1

Ըսել է որ 6567 Ողիմպիադին առջի տարին է :

139 . Հռոմայոս շինոչրեան բռնականը Հռոմովմայեցւոց մէջ զվսաւոր թուական էր : Այս թուականը Յուլեան շրջանին 39627 տարին կիյնայ . Քրիստոսէ 753 տարի առաջ . ու Հռոմ քաղաքին հիմնարկութենէն կը սկսի :

140 . Այս թուականը Հայոց զրոց մէջ ալ կը յիշուի , ու կըսեն Մեծ բռնական Հռոմոնց , կամ թռնականն Յռնաց : Ու մեր մատենագիրքը հազար տարեկան շրջանով կը

Համբն այս թուականը . և առջի շրջանը
լմնցեր է յամի տեառն 247 . երկրորդը յա-
մի տեառն 1247 . երրորդը պիտի լմնայ
2247 Քրիստոսի թուականին :

141 . Թէ որ մէկը ուզենայ իմանալ թէ
այս թուականին ո և իցէ տարին Քրիստո-
սի թուականին ինչպէս կը պատասխանէ ,
ասանկ ընելու է : Թէ որ թիւը 753էն պա-
կաս է , Քրիստոսէ առաջ կիյնայ , ու պէտք
է նոյն տարին 753էն հանել , և մնացորդը
կը ցուցընէ թէ այնչափ տարի Քրիստոսէ
առաջ է : Իսկ թէ որ 652էն աւելի է , պէտք
է 753 թիւը այն թիւէն հանել , ելած թիւը
Քրիստոսի թուականն է :

142 . Թէ որ ուզենանք իմանալ թէ Հռով-
մայի շինութեան 523դ տարին Քրիստոսէ
որչափ առաջ էր , վերի ըսած կանոնով ա-
սանկ պէտք է ընել :

753

523

230

Ուրեմն Քրիստոսէ 230 տարի առաջ էր :
Իսկ Քրիստոսի 674 թուականը Հռով-
մայի շինութեան որ թուականին պատաս-
խանելը ասանկ կիմացուի :

674

753

1427

Ըսել է թէ Հռովմայի շինութեան 1427դ
տարին է :

143. Դիոկղետիանոսի կամ Մարտիրոսաց
քոռականք յամի տեառն 284ին կը սկսի, ու
Յուլեան պարբերութեան 4997դ տարին
կիյնայ : Այս թուականը ասանկ ըսուեցաւ,
որովհետեւ Դիոկղետիանոս կայսեր ատե-
նը շատ Քրիստոնեայք մարտիրոս եղան :

144. Իձիրայի քոռականք Տաճկընները,
Արաբացիք ու ուրիշ Մահմետական ազ-
գերը կը զործածեն : Այս թուականիս ըս-
կիզբը կիյնայ Քրիստոսի 622 տարին, յու-
լիսի 16. ու Յուլեան պարբերութեան 5355դ
տարին :

Իձիրա Արաբացւոց լեզուովը փախոշառ
ըսել է. և այս թուականը սկսաւ Մահմէ-
տին Մէքքէէն փախչելէն :

Մեծամեծ ու արինահեղ խռովութիւն-
ներու դէմը առնելու համար՝ Մէքքէի զըլ-
խաւորները կուզէին զՄահմէտ բռնել. այն
ալ այս խորհուրդն իմանալով՝ զիչերանց
Մէտինէ փախաւ. ու այն եղաւ մահմէտա-
կանաց զլխաւոր թուականը :

145. Նարոշնաւարայ քոռականք Նաբու-
նասար բաբելոնացւոց թագաւորութեան
հիմնադիրը հաստատեց : Քրիստոսէ 767
տարի առաջ կիյնայ . Հռովմայի շինութեան
13դ տարին ու Յուլեան պարբերութեան
4946դ տարին :

146. Սկելեկիացոց քոռականք մեծին Ա-
ղեքսանդրի յաջորդները զործածեցին :

Մեծն Սելեւկոս Ողիմպիազի հաշիւը թո-
ղուց, ու սկսաւ իր թագաւորութեան սկիզ-

բէն հաշուել, որ Աղեքսանդրի մահուրնէն տասուերկու տարի ետե էր:

147. Սելեւկիացոց թուականը Սելեւկոս Նիկատորի Բաբելոնը առնելէն կը սկսի. որ Յուլեան պարբերութեան 4402դ տարին կիյնայ, ու Քրիստոսէ 311 տարի առաջ. Հռովմայի շինութեան 442դ տարին:

Այս թուականը Եդեսացոց թուական ալ կըսուի¹:

148. Տիւրացոց րոշականը Քրիստոսէ 125 տարի առաջ կիյնայ, Հռովմայ շինութեան 628դ տարին, Յուլեան պարբերութեան 4589դ տարին:

Այս թուականը սկսաւ երբոր Բալու Ասորոց թագաւորը հրաման տուաւ Տիւրացոց որ իրենց բնիկ օրէնքներովը վարուին:

149. Կեսարիոյ Անտիոքացոց րոշականը կը սկսի այն յիշատակարանէն՝ զոր Անտիոքացիք Յուլիոս Կեսարու կանգնեցին Փարսալիոյ յաղթութենէն ետե: Ու կիյնայ Քրիստոսէ 48 տարի առաջ. Հռովմայ շինութեան 706դ տարին, ու Յուլեան պարբերութեան 4648դ տարին:

150. Սպանիացոց րոշականը Աւգոստոսի Սպանիոյ յաղթելէն ետե սկսաւ, Քրիստոսէ 39 տարի առաջ. Հռովմայի շինութեան

1 Արևելեան ազգեր դաշնից կամ դաշնադրութեան Լուսիան ալ կըսեն, վասն զի դաշնագիրներու, առուստուրի ու քաղաքական գործողութեանց մէջ այս թուականը կը գործածէին:

7157 տարին , ու Յուլեան պարբերութեան
46777 տարին :

151 . Հնդկաց Քալիյուշի րուսկանը Քրիստոսէ 3101 տարի առաջ կը սկսի , որ ժամանակագրաց հաշուովը ջրհեղեղէն 750 տարի առաջ կիյնայ . իսկ ջրհեղեղը ժամանակագրաց հաշուովը հանդիպեցաւ յամիրարչութեան աշխարհի 2348 :

Այս Քալիյուշի թուականին սկիզբը Յուլեան պարբերութեան 16127 տարին կիյնայ :

152 . Հնդկաց Սանոարի րուսկանը Քրիստոսի թուականէն 57 տարի առաջ կը սկսի . որ Յուլեան պարբերութեան 46567 տարին կիյնայ :

153 . Իսկ Հնդկաց Սարայի րուսկանը 77 տարի Քրիստոսէ ետեւ ըլլալուն՝ Յուլեան պարբերութեան 47907 տարին կիյնայ :

154 . Հայոց րուսկանը Քրիստոսի թուականին 5527 տարին կիյնայ . և այս թուականին պատճառ եղաւ տոմարին նորոգութիւնը , ինչպէս որ առաջ ըսինք (48) :

155 . Սինէացիք 60 տարուան շրջան մը ունին , ու շրջանին ամէն մէկ տարին զատ զատ անուն ունի : Իրենց հաշուին նայելով մինչև հիմայ 76 շրջան անցեր է , ու հիմայ եօթանասունը եօթներորդին մէջն են : Իրենց այս շրջանին սկիզբը 2720 տարի Քրիստոսէ առաջ է , որ Յուլեան պարբերութեան 19937 տարին կիյնայ :

Գար, Հնգեակ, և Յոթեկեակ .

156 . Գարը հարիւր տարուան չրջան է : Քրիստոսէն ետքը առջի տարիները մինչև հարիւրերորդ տարին առջի դար ըսուեցաւ : Հարիւրերորդ տարիէն սկսաւ երկրորդ դարը . երկուհարիւրերորդ տարին երրորդ դարը . հիմակ որ 1800ին մէջն ենք՝ կըսուի Քրիստոսի թուականին իննևտասներորդ դարը :

157 . Հնգեակ , որ Հռովմայեցիք *lustrum* կըսէին , հինգ տարւոյ չրջան է : Վասն զի ամէն հինգ տարին հեղ մը նախ թագաւորները ետքը հիւպատոսները , ու 310 տարի Հռովմայ շինութենէն ետև՝ համարակալները ժողովուրդը կը համրէին , անոնց ունեցածնուն հաշիւը կառնէին , ու վարքերնին կը քննէին :

158 . Այս քննութիւնը լմննալէն ետև՝ քաւութեան զոհ կը մատուցանէին մատակ խոզ մը , ոչխար մը ու ցուլ մը . և անով ժողովուրդը մաքրուած (*lustrari*) կը սեպուէր :

Եւ որովհետև այս արարողութիւնը ամէն հինգերորդ տարւոյն վերջը կըլլար , անոր համար շատ անգամ , մանաւանդ բանաստեղծները , հինգ տարի ըսելու տեղ *lustrum* կըսեն . որուն մենք ալ Ա՛մ քառուորեակ կրնանք ըսել :

159 . Ա՛մէն այս քաւութեանը տարին

համարակալներուն մէկը ծերակոյտն ալ կը քննէր . ու թէ որ մէկը իր վարքին պատճառաւ ծերակուտական պատուոյն անարժան սեպուէր , կամ թէ ծերակուտին մէջ մտնալէն առաջ ունեցածը փճացուցած ըլլար , համարակալը սինկղիտիկոսներուն անունը կարդալու ատեն , անոր անունը չէր յիշեր , և ասով այնպիսին ծերակուտէն դուրս ինկած կը սեպուէր . (E senatu motus).

160 . Յորեւեան կըսուի տօնի մը կամ հասարակաց ուրախութեան մը օրուան շրջանը , որ երեսելի դիպուածի մը համար , կամ կարգէ դուրս մարդու մը յիշատակը պահելու համար կը հաստատուի :

161 . Յորեւեանը 25 կամ 50 տարուան շրջան է :

162 . Հրէից Յորեւեան տարին կը կատարուէր ամէն 494 տարին . որ շատ ազատութիւններու տարի էր և ուրախութիւններ կընէին :

163 . Քրիստոնէից մէջ Յորեւեան տարի կըսուի ամէն 254 տարին . և հոգևորական հանգէսի տարի է , ու Հռովմայ քահանայապետը կը հրատարակէ լիակատար ներողութիւն բաշխելով բոլոր իր ժողովրդոցը :

Քանի մը պատմական յիշատակարաններ .

164. Պարոսի կամ Արքևոտի կամ Օբսֆրրոսի մարմարիտներ կըսուի ժամանակագրութիւն մը Յունաց զլխագիր տառերով մարմարիտնի վրայ փորած :

Այս յիշատակարանը եօթնևտասներորդ դարուն սկիզբը գտնուեցաւ Արչիպեղագոսի Պարոս կղզւոյն մէջը :

Թովմաս Արընտէլ անգղիացի կոմսը այս մարմարիտները 1627ին Անգղիա փոխադրել տուաւ ու Օքսֆըրտի ճեմարանին գրատունը դնել տուաւ :

165. Այս յիշատակարանին փորագրութիւնն եղած է Քրիստոսէ 264 տարի առաջ : Կը սկսի Քրիստոսէ 1582 տարի առաջ, ու կը հասնի մինչև 2647 տարին :

Յիշատակարանիս առաջին տպագրութիւնը Յովհաննէս Սէլտըն ըրաւ 'ի Լոնտրա, 1629ին :

156. Արևևացոց Արիտներուն տախտակները քսանըջորրորդ ողիմպիադին առջի տարիէն կը սկսին Աթենացոց Արիտներուն անունները շարել, ու կը հասնին մինչև հարիւր քսանըմէկերորդ ողիմպիադին չորրորդ տարին . որ է ըսել Քրիստոսի թըւականէն 680 տարի առաջ կը սկսին ու կը հասնին 292 տարի Քրիստոսէ առաջ . 388 տարուան ժամանակագրութիւն :

167. Հիւպատոսական տարեգիրք կը սկսին Հոովմայի թագաւորութիւնը կործանելէն ու հիւպատոսները հաստատելէն, որ կիյնայ Հոովմայի շինութեան 2457 տարին. Քրիստոսէ 509 տարի առաջ, ու Յուլեան պարբերութեան 42077 տարին: Կապիտուլեան ըսուած մարմարիոններուն վրայ Հըոովմայեցոց հիւպատոսներուն անունները կարգաւ փորագրուած են մինչև Հոովմայի շինութեան 12947 տարին, ու Քրիստոսի թուականին 5417 տարին:

158. Քառագանագիրք Հայոց կաթուղիկոսներուն կարգն է, սուրբ Թադէոս առաքեալէն կամ սուրբ Գրիգոր Առաւորչէն սկսեալ. որ ազգային ժամանակագրութեան կարևոր կանոններէն մէկն է:





2881

2013



